# Saint Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

**Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan**
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
*Pastoral office* t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
**www.styeghiche.org.uk** **https://www.facebook.com/StYeghiche**


**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN**


**1: Today's Scripture Reading, 22nd December 2024 Bulletin 53/2024**


## Fifth Sunday of Advent

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ4:16-5:10

որ մարմինը իր բոլոր մասերով ներդաշնակ միասնութեամբ մը իրարու կը կապէ, բոլոր յօդերու օգնութեամբ: Եւ երբ իւրաքանչիւր մաս պէտք եղածին պէս կը գործէ՝ մարմինը կ'աճի եւ կը զօրանայ սիրոյ մէջ:

**Քրիստոնեային ապրելակերպը**

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի.– Չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին, որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով՝ օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի, թէ այդ չէ՛ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք՝ թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէն հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ՝ «Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէք». եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք Սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր՝ թող այլեւս չգողնայ, այլ՝ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու, օգնելով անոնց՝ որոնք կարօտ են: Ոեւէ տգեղ խօսք չելլէ՛ ձեր բերանէն: Խօսեցէք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները Աստուծոյ շնորհքովը լեցուին: Մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Ձեզմէ արմատախի՛լ ըրէք ամէն դառնութիւն, բարկութիւն ու զայրոյթ, պոռչտուք եւ հայհոյութիւն, եւ առաջքը առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

**Ի՞նչպէս նմանիլ Աստուծոյ**

Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները, ւ սիրով շարժեցէք, այնպէս՝ ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ զոհ: Պոռնկութեան, ոեւէ պղծութեան կամ ագահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէ՛ս կը վայելէ Աստուծոյ ժողովուրդին: Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ագահ – ինչ որ կռապաշտութիւն է

**Our Aim;**
**St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.**

## 2: A short interpretation of the Scripture reading

ժառանգութիւն պիտի չունենա՛յ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: 6Հետեւաբար, չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ. որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անհնազանդ մարդոց վրայ: 7Ասկէ ետք ոեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, 8որովհետեւ թէպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար լոյսի որդիներուն վայել ձեւով ապրեցէք. 9որովհետեւ լոյսին պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: 10Ջանացէք հասկնալ՝ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ,

## The Epistle of St Paul to the Hebrews 4:16-5:10

So we should come near to God and we should not be afraid. God is our King. We can ask him to help us when we need help. We know that he will forgive us and he will be kind to us in whatever way we need.

Every leader of God's priests comes from among the people. That special priest's work is to serve God on behalf of God's people. He offers gifts and sacrifices to God, so that God will forgive the people's sins. That priest himself may often do wrong things, because he is weak and human. As a result, he understands other people who make mistakes. He can be kind to people who do wrong things. But, because he himself does wrong things, he must offer sacrifices to God on behalf of himself, as well as on behalf of the people.

Nobody decides for himself to become a leader of the priests. God himself must choose him. That is how Aaron became a priest.

It is the same with Christ. He did not choose himself to be God's special priest. He did not choose to make himself important like that. God chose him. God showed that Christ was very important. God said to him:

'You are my Son. Today I have become your Father.'

And in another place in the Bible God says this:

'You will be a priest for ever, in the same way that Melchizedek was a priest long ago.'

When Jesus Christ lived on earth as a man, he often prayed to God. He asked God to help him. He prayed strongly and he cried loudly with many tears. He knew that God could save him from death. And God listened to Jesus when he prayed, because Jesus served God.

Jesus is God's Son. But he still had trouble and pain. In that way, he learned to obey God completely. As a result, Jesus became the person who can save everyone who obeys him. Because of Jesus, God forgives their sins for ever. God has chosen Jesus to be his special priest in the same way that Melchizedek was.

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 18:9-14

**Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակը**

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին:

Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուա՛ծ, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

Կ'ըսեմ ձեզի,– եզրակացուց Յիսուս,– մաքսաւո՛րն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

**Dear Parishioners and Armenian Community Members**:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

## The Holy Gospel of Jesus Christ according to Luke 18:9-14

**Jesus tells a story about two men who were praying**

Jesus told a story to teach other people. These people thought that they were very good in front of God. They thought that they were much better than other people.

Jesus said, 'One day, two men went into the temple to pray. One man was a Pharisee. The other man took taxes from people.

The Pharisee stood there by himself. He prayed like this: "Thank you, God, that I am different from all these other people. They are bad people. They rob other people. They have sex with women who are not their wife. Thank you, God, that I am not like this man who takes taxes on behalf of the government. I fast for two days of each week. I give to you one tenth of all the things and money that I receive."

But the other man stood far away. He would not even look up towards heaven. He was hitting his body with his hands to show how sorry he was. He prayed like this: "Please, God, be kind to me. I have done many bad things."'

Jesus then said, 'Let me tell you about these men when they went home. The man that took taxes from people was now right with God. But the Pharisee was still guilty. Some people lift themselves up to be important. But God will bring all of them down low. Other people are humble. God will lift up those people to a good place.'

## Ս. ԱԲԳԱՐ ՆԱԽԱՎԿԱՅԻ և ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՎԱՏԱՑՈՂ ՄԵԾ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Աբգար հայոց արքան աստվածասեր և մեծահավատ էր՝ ըստ մարմնի թագավորակից Քրիստոսին, որովհետև Քրիստոս ծնվեց Ս. Կույս Մարիամից Աբգարի թագավորության առաջին տարում և 30 տարի հետո մկրտվեց Հորդանան գետում Հովհաննեսից:

Աբգարը, լսելով նրա մասին, անմիջապես հավատաց Նրան՝ թողնելով կռապաշտությունը: Եվ քանզի թագավորը հիվանդ էր բորոտությամբ, և չկար բժշկության հնար, Աբգարն ուղարկեց Անանեին՝ իր փառավոր նախարարին՝ ապահունիների իշխանին, նրա հետ 10 պատվավոր մարդկանց՝ մեծագին ընծաներով և նվերներով: Նաև գրեց Հիսուսին իր հավատի խոստովանության նամակը և աղաչեց գալ՝ բժշկել նրան չարաչար ցավից և լինել իր հետ: Անանեի հետ ուղարկեց Հովհաննես անունով մի նկարչի, որ եթե չկամենա Հիսուսը գալ արքայի մոտ, նկարեն Նրա պատկերը և բերեն իրեն:

Անանեն եկավ, հասավ Երուսաղեմ Ծաղկազարդի օրը, երբ Հիսուս իջավ Ձիթենյաց լեռի զառիվայրերով Գեթսեմանի, այնտեղից ելավ ավանակով Երուսաղեմ քաղաքը և գնաց մտավ Սողոմոնի տաճարը: Ելնելով տաճարից՝ Հիսուս գնաց Գամաղիէլ օրենուսույց վարդապետի տունը, ով Նիկոդեմոսի՝ Հիսուսի գաղտնի աշակերտի, եղբայրն էր, որովհետև Գամաղիէլը մեծարեց Հիսուսին և տարավ Նրան տաճարից իր տունը: Անանեն ուղարկեց պատվավոր յուրայիններին Հիսուսի աշակերտների մոտ՝ հարցնելու նրանցից, թե «ինչպե՞ս տեսնենք Քրիստոսին»: Ըստ Հովհաննես (Ավետարանչի), որ ասում է. «Կային այնտեղ ոմանք հեթանոսներից, որ եկան Երուսաղեմ և մոտեցան Փիլիպոսին ու ասացին. «Տե՛ր, կամենում ենք Հիսուսին տեսնել»: Փիլիպոս ասաց Անդրեասին: Անդրեասն ու Փիլիպոսը ասացին Հիսուսին և տարան նրանց Հիսուսի մոտ: Անանեն և յուրայինները տեսան Հիսուսին առաքյալների հետ Գամաղիէլի տանը: Հիսուս ընդունեց նրանց ուրախությամբ և ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին»: Անանեն ոտքի կանգնեց, տվեց նամակը, երկրպագեց և Հիսուսին փոխանցեց արքայի ողջույնը: Հիսուս օրհնեց Աբգարին և նրա թագավորությունը, հրամայեց Թովմային նրան պատասխան գրել, երանի տվեց Աբգարին նրա հավատի համար և ասաց. «Փոքր-ինչ ժամանակ եմ աշխարհում, ապա կվերանամ երկինք՝ Իմ Հոր մոտ: Այնժամ կուղարկեմ քեզ մոտ Իմ աշակերտներից մեկին՝ կյանք տալու համար քեզ և ովքեր քեզ մոտ են»: Հիսուս օրհնեց նաև այն պատկերը, որ նկարել էր Աբգարի սուրհանդակը:

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

Այն բերեցին և տվեցին Աբգարին՝ փոխանակ Տիրոջ: Տեսնելով այն՝ բարեպաշտ արքան ուժգին բերկրեց և համբուրեց ջերմեռանդ սիրով ու հաստատուն հավատով, որով այնժամ առողջացավ կես մարմնով: Աբգարը համարեց, թե տեսավ Քրիստոսին մարմնով:

Քրիստոսի համբարձումից և Հոգեգալուստից հետո, զինված գեղարդով և Ս. Հոգով՝ Թադեոս առաքյալը եկավ Տուբա հրեայի տունը և բժշկեց նրան (որովհետև մահճին գամված էր իր հիվանդությամբ): Աբգարը, լսելով դրա մասին, ասաց, թե. «Սա նա է, որին խոստացավ ուղարկել ինձ Քրիստոս» և, ուղարկելով նրա ետևից, կանչեց իր մոտ Ս. առաքյալին: Երբ Թադեոսը մտավ Աբգարի մոտ, արքան, վեր կենալով իր գահից, երկրպագեց Թադեոսին և օրհնություն խնդրեց առաքյալից, քանզի սքանչելի նշան տեսավ նրա երեսին և ոսկե թագ Թադեոսի գլխին, ինչպես թագավորի մոտ: Թադեոսը, ձեռքը դնելով թագավորի գլխին, Քրիստոսի անվամբ փարատեց նրանից բորոտության ցավը: Ապա մկրտելով թագավորին՝ բոլորովին բժշկեց նրան չար հիվանդությունից: Նույնպես և բոլոր քաղաքացիները հավատացին Քրիստոսին և մկրտվեցին:

Առաքյալը կառուցեց եկեղեցիներ, ձեռնադրեց քահանաներ և պաշտոնյաներ: Ձեռնադրեց եպիսկոպոս Ադդե կերպասագործին՝ Քրիստոսի 70 աշակերտներից, և թողեց նրան իր փոխարեն քաղաքի առաջնորդ: Իսկ ինքը՝ առաքյալը, վերցնելով Աբգար արքայից հրովարտակներ, որպեսզի ամեն ոք հնազանդվի Քրիստոսի ավետարանին Թադեոսի քարոզությամբ, շարժվեց դեպի Վերին Հայք, Սանատրուկ արքայի մոտ, ով Աբգարի քրոջ որդին էր:

Աստվածասեր Աբգար թագավորը եղավ առաքելաբար Ավետարանի պատմողը. նշաններ և բժշկության հրաշքներ էր գործում: Գրեց նամակ Հռոմի կայսեր Տիբերիոսին, որպեսզի նա հրաման տա իր տերության բոլոր գավառներում պաշտել Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին՝ ծնված Բեթղեհեմում Ս. Կույս Մարիամից, ով անարգվեց Պիղատոսից և խաչվեց հրեաների կողմից: Նույն նամակը Աբգար թագավորը գրեց պարսից Արշավիր արքային՝ իր ազգականին և հանձնարարեց նրան ընդունել Սիմոն Կանանացուն, նույն ինքը Շմավոն նախանձահույզին՝ Հովսեփի որդուն և Հակոբոս Տեառնեղբոր եղբորը: Թագավորը նրան հանձնեց Արշավիր արքային, որպեսզի լսեն առաքյալի քարոզը: Բաբելացիների Ներսեհ մանուկ արքային նույնպես գրեց Աբգարը՝ հնազանդ լինել Ավետարանի քարոզին և պաշտել Քրիստոս Աստծուն: Եվ այնպես հոժարությամբ հոգ էր տանում բարեպաշտ Աբգարը՝ ամենուր Քրիստոսի արքայությունը քարոզելու համար, որպեսզի Քրիստոսի Ավետարանի քարոզը ընդդիմության չհանդիպի:

Քրիստոսին հավատացող հեթանոս թագավորներից առաջինը և բոլոր քրիստոնյա թագավորների անդրանիկը՝ բարեպաշտ Աբգար թագավորը, իր կյանքը և թագավորությունը այսպես կարգավորելուց հետո, առաքինի կյանքով ապրած և ալևորության հասած, հանգեց ի Քրիստոս և փոխադրվեց անանց թագավորություն դեկտեմբերի 31-ին:

## COMMEMORATION OF ST. ABGAR, FIRST MARTYR OF THE CHURCH AND OUR FIRST KING BELIEVING IN CHRIST

According to the tradition St. Abgar was the first Christian king of the 1st century, the son of the Parthian king Arshakunie Arsham. He was also called “senior man” as he was the wisest of all and of genius. Historian Moses of Khoronk, Assyrian historian Labubnia of Yedessia, Greek historians Procopis and Yeusebius have told about the king Abgar. He built the city of Yedessia in the site where the Armenian army protected the ford of the river Euphrates from the Roman captain Casius. Later the king moved the royal palace and all idols from Nisibis to that city.

It is during the period of reign of the king Abgar that Jesus Christ, the Savior of the world, was born. And Abgar, who was incurable, becoming aware of the wonders worked by Christ, believed in Christ and by means of his delegates sent a letter-petition to Jerusalem, to the Savior, asking Him to come and heal him. In the response letter it was said, that Christ still had important things to do in Jerusalem, but He should send one of His disciples to the king to heal him. After the Ascension of the Savior Apostle St. Thaddeus came to Yedessia, healed the king Abgar, the sick, preached the Gospel and appointed Adde, the silk-weaver, to be his successor. Jesus had sent his portrait to Abgar and it was kept for a long time in Yedessia, and later in the churches of various cities and towns.

After that the king Abgar sent letters to the king Tiberius and the king Nerseh of Assyria exhorting them to admit Jesus Christ as the Son of God and the Savior. The king Abgar passed away probably in the first half of the 1st century.

## 3: This week's message from our Priest in Charge

**Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

"Այս առակն էլ ասաց ոմանց, ովքեր իրենց ներսում պարծենում էին, թէ արդար են եւ արհամարհում էին շատերին" (Ղուկ. 18:9):

Աստծուն սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Այսօր ներսի, մեր հոգու հայելու մէջ մեզ տեսնելու եւ քննելու խոկումին է առաջնորդում Աւետարանը: Իմաստասէրները դեռ վաղուց սահմանել են մարդուն իբրեւ հասարակական էակ: Անգամ անապատ քաշուած ճգնական կեանքի մենակեցութիւնն աւելի զարգացում ապրեց վանական եղբայրութիւնների մէջ: Մենք եւս ապրում ենք հանրութեան, ընկերութեան մէջ, եւ կամայ թէ ակամայ մեր յարաբերութիւններն ենք կառուցում այլոց հետ՝ լինի դա գործընկերների, ուսանող ընկերների, մեր անդամակցած կազմակերպութիւնների անդամների եւ կամ եկեղեցի այցելող հաւատակից մեր եղբայրների եւ քոյրերի հետ: Որպէս կանոն, առաջին հայեացքից մարդիկ ուրիշների մասին, յաճախ ինքնաբերաբար կերպով, կարծիք են կազմում արտաքինից, հագուստից, շարժուձեւից, խօսքից, ընդհանուր ընդունուած ընկալումներից: Մեր մասին էլ են մտածում այդպէս ուրիշներ. հայ ենք, քրիստոնեայ, իւրաքանչիւրիս դէմքին՝ մեր տոհմի անցած ճամփի կնիքը: Իւրաքանչիւր մարդ իր մասին մտածելիս կարող է իրեն պատկերացնել իբրեւ լաւ մարդ, անգամ միւսներից առաւել լաւը: Ներսի մտածում է սա, որ դրսից գուցէ երբեւէ չը տեսնուի, բայց մնայ տեսանելի Աստծուն: Իսկ Աստուած, համաձայն սաղմոսի, սրտեր եւ երիկամներ քննող Տէր է:

Այս է պատճառը, որ Փրկիչը միայն Աստծո՛ւն տեսանելի հոգեւոր այս ախտի՝ սնափառ հպարտութեան մասին է առակով խօսում եւ ցոյց տալիս, որ ինքնագով փարիսեցին չէ, որ արդարացաւ այլ մեղքը գիտակցող եւ զղջացող մաքսաւորը: Այլ տեղում Տէր Յիսուս հրեաներին է ասում սա.

"Աչքներիդ երեւացածի պէս մի՛ դատէք, այլ ուղի՛ղ դատաստան արէք" (Յովհ.7:24):

Իսկ ո՞րն է ուղիղ դատաստանը: Հայերէնը հանճարեղօրէն այս բառը երկիմաստ կերպով է մատուցում: Դատելը ե՛ւ դատապարտելու, ե՛ւ մտածելու երեսներ ունի: Մի մարդու մասին մեր մտածումն արդեն գնահատանք է, դատ եւ դատավճիռ: Հետեւաբար մի՛տքն է պետք մաքրել, սիրտն ու ամբողջ ներաշխարհը, որպէսզի ամէն մարդու դատած չը լինենք:

Այս յատուածը մեզ յետաքրքիր շղթայով է ներկայանում. մինչ այս դրուագը, Քրիստոս այրի կնոջ օրինակով խօսում է անդադար աղօթքի մասին: Փարիսեցու եւ մաքսաւորի՝ աղօթքի մէջ Աստծոյ առաջ զոռոզ կամ խոնարհ կանգնելու առակով ուսուցանում է, թէ ինչպէս պէտք է աղօթել: Իսկ սրանից յետոյ մանուկների պէս խոնարհ լինելու կոչն է անում, որպէսզի յասկանալի դառնայ, թէ ինչպէս է անհրաժեշտ խոնարհեցնել սեփական անձը:

Այսու, կարելի է որոշ կետեր առանձնացնել ինքնաքննութեան եւ խոկումի համար, որպէսզի պարծենկոտ չ'երեւանք Աստծուն եւ դատարկ աղօթած չլինենք:

-Նախ այն, որ արթուն մտքով հանապազ աղօթենք խոնարհաբար, եւ Աստծոյ դիմաց մեր խոնարհ լինելը արտայայտենք մեզ չը գովաբանելով եւ չը յիշելով մեր բարի գործերը, այլ փառաբանելով եւ շնորհակալ լինելով:

-Միւս կարեւոր հանգամանքն այն է, որ Աստծոյ առաջ կանգնելիս մեզ չը համեմատենք ուրիշների հետ, ուրիշների կեանքն ու գործը չը քննենք, այլ մեր մեղքերը դնենք Իր առաջ՝ ողորմութիւն եւ ներում խնդրելով:

-Եւ երրորդ անհրաժեշտ դիտարկումը երեխաների պէս մեր անձը ծառայութեան մէջ դնելն է, որով էլ կամաւորաբար խոնարհեցրած կը լինենք մեր անձերը՝ ըստ Տէրունական խօսքի. "Ով որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի"(Ղուկ. 18.14):

Աղօթքով, ինքնադատումով եւ ծառայութեամբ խոնարհուենք Աստծոյ առաջ եւ Քրիստոս կը բարձրացնի մեզ: Իրական խոնարհությունն այն է, երբ քեզ խոնարհեցնում է դիմացինդ, եւ դու ընդունում ես դա: Ամենադժուարը թերեւս սա է, բայց Աստուած խոնարհներին է օգնում, աւելին՝ շնորհի արժանացնում, քանի որ "Տէրը հակառակ է ամբարտաւաններին. Նա շնորհ է տալիս խոնարհներին" (Առակաց 3.34):

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

**Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

**Dear Parishioners**
**and**
**Armenian Community Members**

The St Yeghiche Armenian Church's 2025 year calendar is out, with both Armenian Religious Feast dates and UK holiday dates.

These are available at St Yeghiche Armenian Church front desk,
from Sunday 1st December 2024,
and till the stock last.

These are great gift idea for New Year
To give to your friends and relatives.

We encourage every Armenian Household to have one, and bring our Lords blessing to your home and Family.

Thank you for your generous support
**St Yeghiche Armenian Church Parish Council**

## DAILY BIBLE READINGS FOR 2024 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

| | |
|---|---|
| 23 December | St. David the Prophet and Holy Apostle James<br>2 Samuel 5:1-10; 1 Kings 2:1-11; Ezekiel 34:20-27; James 1:1-12; Matthew 22:41-46 |
| 24 December | St. Stephen the Proto-Deacon and the First Martyr<br>Acts 6:8-8:2; John 12:24-26 |
| 25 December | Hebrews 5:11-6:8; Luke 18:18-27 |
| 26 December | The Holy Apostles Peter and Paul<br>Wisdom 9:13-10:2; Isaiah 28:16-19; 2 Peter 1:12-19; 2 Timothy 4:1-8; John 21:15-22 |
| 27 December | Hebrews 6:9-7:10; Luke 19:1-10 |
| 28 December | The Holy Apostle James and John the Evangelist, Sons of Thunder<br>Wisdom 7:21-24; Jeremiah 16:16-21; Acts 12:1-11, James 1:1-10; 1 John 1:1-7; John 21:20-25 |

## Announcement:

It is a great sadness the loss of a long-time parishioner of St. Yeghiche Armenian Church, and an elected member to its Parish Council since 2022, the late Armen Bablanian, who passed away on 17th November 2024, after a prolonged illness.

In lieu of flowers, the family has requested memorials to be donated to,
**St. Yeghiche Armenian Church Parish**
HSBC Bank, Account Number: 42674432, Sort Code: 40-02-26,
IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

**Thanking you in advance,**
**St Yeghiche Armenian Church Parish Council**

## 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Nona Avetoom and Family, Meri Karapetian and Family for the souls of their Father who was also a loving Grandfather the late **VAHRAM BAGHDASARYAN** on the 40th day memorial service of his passing, also for all the old and new deceased members of the **BAGHDASARYAN**, **SIMONYAN, AVETOOM** and **KARAPETIAN** Families.

By Sonia Bablanian, Van, Nadia, Arshag and Varant Dickranian, Silva, Greg, Knar, Garin and Daron Bedian, Rouben Dickranian, Shant, Lilit and Hayk Bablanian, Ani, Alexander and Thor Alexander Albert for the soul of their Mother who was also a loving Grandmother and Great Grandmother the late **MANOOSHAG DIKRANIAN** on the 1st anniversary memorial of her passing, also for their Husband, Father and Grandfather the late **ARMEN BABLANIAN** on 40th day memorial of his passing, also for all the old and new deceased members of the **DIKRANIAN, BABLANIAN, BEDIAN and ALBERT** Families.

By Mrs Lorance and Arakelian Family for the soul of their Uncle the late **DIKRAN MELIKIAN** on the 40th day memorial service, who passed away in USA, and for the late **DIKRANOUHI MELIKIAN**, also for all the old and new deceased members of **MELIKIAN** Family.

By Mrs Maria Boghos Boghosyan, Sipan Khacher Khorozyan and Family, Bedros Khacher Khorozyan and Family, Anoosh Khacher Khorozyan and Family, Khatoon Khacher Khorozyan, for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **KHACHER STEPAN KHOROZYAN**, also for all the old and new deceased members of the **KHOROZYAN** Family.

By the Rand/Hayek family for the soul of beloved Mother who was also a loving Grandmother the late **ANAHID NAKASHIAN** on her fourth anniversary of passing, also for all the old and new deceased members of **HAYEK** and **NAKASHIAN** Families.

By Sahakian Family for the soul of their both Parents who were also a loving Grandmothers and Grandfathers the late **SIMON SAHAKIAN**, on the 1st anniversary of his passing, **ANAHID GHAZARIAN**, **SARKIS & MARIE-JEANNE DEMIRDJIAN**, also for all the old and new deceased members of the **DEMIRDJIAN, SAHAKIAN**, **GHAZARIAN**, **YERAMIAN** and **ERSAN** Families.

By St Yeghiche Armenian Church Deacons for the soul of their past Deacon Brothers the late **HAGOP KEOSHKERIAN**, **VARTGES KESHISHIAN** and **DERTAD SHAMILIAN** in Commemoration of St. Stephen the Protomartyr and the first martyr.

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Viken, Hourie, Zovig Haladjian and Arda and Varag Atanosian and Family for the foul of their Mother who was also a loving Grandmother the late **OVSANNA HALADJIAN**, also for all the old and new deceased members of the **HALADJIAN** Families.

By Viken, Zovig Haladjian and Arda and Varag Atanosian and Family for the foul of their Father who was also a loving Grandfather the late **JOSEPH KAZARIAN**, also for all the old and new deceased members of the **KAZARIAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

## General

***St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs***

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

**Hokehankist Requests:** To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

**In Liu of Flowers**: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

**Donations** for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal account.

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

**Membership:** St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

# St Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered Charity No 1173403
St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

## *New Year and Christmas at St Yeghiche Armenian Church*
## *ՍԲ. ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ*
## *2025*

***Christmas Week / Սբ.Ծննդեան պահք՝ դեկտ. 30-ից հունուար 5***

*Sunday 22nd December 2024* — **11:00** Divine Liturgy / *Սբ. Պատարագ*

*Sunday 29th December 2024* — **11.:00** Divine Liturgy / *Սբ. Պատարագ*

***New Year / Նոր Տարի***

*Wednesday 1st January 2025* — **11:00** Divine Liturgy and blessing of Pomegranates./*Սբ. Պատարագ եւ Նռնօրհնէք*

***Jerakaloutz/ Ճրագալոյց*** — ***Christmas Eve Prayers***

*Sunday 5th January 2025*

No Morning Service

**15:00** Scripture readings / *Ճաշու ընթերցումներ*

**16:30** Christmas Eve Eucharist and Holy Communion / Սբ. Ծննդեան Ճրագալոյցի Սբ. Պատարագ

**18:30** Blessing of home / *Տնօրհնէք*

***Theophany and Epiphany/ ՍԲ ԾՆՈՒՆԴ Ե ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ***

*Monday 6th January 2025* — **11:00** Episcopal Divine Liturgy followed by Blessing of the Water /Առաջնորդական *Սբ. Պատարագ, Ջրօրհնէք* (Պատարագիչ՝ Գերշ. տ. Յովակիմ եպս Մանուկեան)

***Blessing of the Graves***

*Tuesday 7th January 2025* — **11:00 – 2:00** Rev Fr Nshan will be available at Gunnersbury Cemetery to conduct individual prayers.
If you require at any other cemetery, please contact us to arrange with the Clergy Visiting the Cemetery.

**All faithful are invited and encouraged to join us with their prayers.**

For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or visit www.styeghiche.org.uk

May the Joy and Peace of Christmas
be with you now and throughout the coming year.

Priest in Charge: Rev Fr Nshan Alaverdyan
Chairman: Mr. V Haladjian, Vice Chairman: Mr. K Vartanian, Treasurer: Dr. S Karanfilian,
Members: Mr. N Minassian, Mr. A Bablanian,
Company limited by Guarantee, Registered company in England and Wales under Company Registration Number 9180860.

"Designed by Freepik"